

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Երազանք մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

N	Տնօրենի թափուր պաշտոնի անվանումը	Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)	Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝	Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը)
1	2	3	4	5
1.	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Երազանք մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն	<p>1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր բավարարում են՝</p> <p>1) &lt;&lt;Նախադպրոցական կրթության մասին&gt;&gt; Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին</p> <p>2) Իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):</p> <p>2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝</p> <p>1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.</p> <p>2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.</p> <p>3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.</p> <p>4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.</p> <p>5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.</p> <p>6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:</p> <p><b>Տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ սույն հայտարարության 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային Հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պայմանները:</b></p>	<p>Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն չի կարող ընտրվել, նշանակվել այն անձը, որը՝</p> <p>1) &lt;&lt;Նախադպրոցական կրթության մասին&gt;&gt; Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված կարգով չի ստացել նախադպրոցական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր.</p> <p>2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.</p> <p>3) դատական կարգով գրկվել է մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.</p> <p>4) ունի այնպիսի հիվանդություն, որը կարող է խոչընդոտել մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը.</p> <p>5) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ վերացված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:</p> <p>6) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.</p> <p>7) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում սույն կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են.</p> <p>7) 65 տարին լրացած քաղաքացիները:</p>	<p>1) դիմում.</p> <p>2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.</p> <p>3) քաղվածք աշխատանքային գրքուկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.</p> <p>4) ինքնակենսագրություն.</p> <p>5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքուկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.</p> <p>6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.</p> <p>7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):</p> <p><b>Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:</b></p>
Մրցութներն անցկացնելու վայրը, օրը, ժամը,		Դիմումների և փաստաթղթերի ընդունումը		Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը
վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1 Գյումրու համայնքապետարան 3-րդ հարկ, նիստերի դահլիճ օրը՝ 2023 թվականի դեկտեմբերի 14-ին ժամը՝ 11:00		Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ և հարցաշարերը ստանալու համար դիմել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (3-րդ հարկ, հեռ.՝ 0312-2-22-18), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (1-ին հարկ, հեռ.՝ 0312-49000-147): Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի ոչ աշխատանքային օրերից		2023 թվականի դեկտեմբերի 4-ը ներառյալ: